ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 2 հունիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Քննության առնելով քաղաքացի Նարինե Սահակյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. Քաղաքացի Նարինե Սահակյանը 18.05.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթի սահմանադրականությունը:

Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է «որոշել ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դրույթի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

2. Վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ դիմողը ներկայացրել են հետեւյալ հիմնավորումները.

դիմողի կարծիքով՝ ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասում եթե նշվում է, որ ինքնաբացարկի մասին որոշումը կարող է բողոքարկվել, ապա խոսքը

վերաբերում է թե դատավորի կողմից հայտնած ինքնաբացարկին, թե դատավորին հայտնած ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշմանը, քանի որ վիճարկվող դրույթն իր բովանդակությամբ ընդհանուր է: Ինքնաբացարկի միջնորդության դեպքում դատարանը կայացնում է 2 տեսակի որոշում՝

1. կամ՝ բավարարման,
2. կամ՝ մերժման

Հետեւաբար, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասում նշված «որոշում» եզրույթը, դիմողի կարծիքով, վերաբերում է եւ՛ բավարարման, եւ՛ մերժման որոշումներին:

Դիմողը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը եւ ՀՀ վճռաբեկ դատարանն իրենց որոշումներում վիճարկվող նորմին տվել են այլ մեկնաբանություն՝ նշելով, որ այն կիրառելի է միայն դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու որոշման դեպքում:

Ըստ դիմողի՝ նման մոտեցումը նեղացնում է նորմի կիրառման դաշտը՝ միաժամանակ փոխելով նորմի իմաստը: Արդյունքում՝ ստեղծվում է իրավակիրառական այնպիսի պրակտիկա, որը հակասում է Սահմանադրությամբ սահմանված դատական պաշտպանության իրավունքին, 19-րդ հոդվածով սահմանված անկողմնակալ դատարանի կողմից գործի քննության իրավունքին, 18-րդ հոդվածով սահմանված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքին:

3. Ուսումնասիրելով դիմումը եւ դրան կից փաստաթղթերը՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը գտնում է.

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում ,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

«Քաղաքացի Նարինե Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը ընդունել քննության եւ որպես պատասխանող ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

2 հունիսի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-14